«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 10
17.05.2022թ.

1. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետում և ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և խնդիրների վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին 10-օրյա ժամկետում ներկայացնել.

- Ջրային և հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացի մոդուլ, ծառայությունների մատուցման ցուցակ, գնացուցակ:
- Անօդաչու թռչող սարքերի ուսումնասիրման լաբորատորիայի կողմից ծառայությունների մատուցման ցուցակ, գնացուցակ, վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների մոդուլ:
- Մեկ շաբաթյա ժամկետում պարոն Վ. ՈՒռուտյանին և Ա. Ամիրյանին ներկայացնել ԱՃ ֆակուլտետի նոր ՄԿԾ-ը:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների և Ագրոնոմիական ֆակուլտետներում ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների կատարման ընթացքի, նյութատեխնիկական ապահովվածության և խնդիրների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ՊՏՖ ՊՏՖ դեկանի պաշտոնակատար Ս. Դավեյանին ֆակուլտետում բացված և առաջիկայում ստեղծվող լաբորատորիաների հնարավորություններն օգտագործել ուսումնական գործընթացում (դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման, դասասախոսական անձնակազմի վերապատրաստման նպատակով:

3. Դոցենտի գիտական կոչում ստանալու համար ներկայացված դիմումների վերաբերյալ.

Գիտական խորհուրդը միաձայն որոշեց՝ հաստատել գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները և երկու թեկնածուներին շնորհել դոցենտի գիտական կոչում.

3.1. Բելլա Արկադիի Գրիգորյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Զ.01.00 - «Ագրոնոմիա» մասնագիտությամբ:

3.2. Արտակ Հենրիկի Գաբրիելյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ե.18.00 - «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

4. ՀԱԱՀ-ում կազմակերպվող «ՈՒսանողական գիտական շաբաթ» միջոցառման վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

5. Համալսարանի նոր նախաձեռնությունների վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

6. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ոսկե» հուշամեդալով պարգևատրելու առաջարկության վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց Վանաձորի մասնաճյուղի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն Վարդ Սարգսի Մանուկյանին պարգևատրել ՀԱԱՀ 90-ամյակի «Ոսկե» հուշամեդալով:

7. «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում» աշխատությունը (հեղ. Հ. Վերմիշյան, Ա. Վարտիկյան, Է. Գևորգյան, Ս. Միչիկյան, Ա. Ղալամդարյան) հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց ՀԱԱՀ մեթոդական խորհրդի կողմից ներկայացված՝ Հ. Վերմիշյանի, Ա. Վարտիկյանի, Է. Գևորգյանի, Ս. Միչիկյանի և Ա. Ղալամդարյանի համահեղինակությամբ կազմված «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում» անվանումով աշխատությունը երաշխավորել հրատարակման:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ